# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2022 թվականի նոյեմբերի 25-ից 28-ը

## Ռուսաստանի Դաշնություն (ք. Կրասնոյարսկ) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

   Էլենա Սագարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   քաղաք Կրասնոյարսկ, Ռուսաստանի Դաշնություն, 2022 թվականի նոյեմբերի 25-ից 28-ը ներառյալ

4. **Հրավիրող կողմը՝**

   ՌԴ ԱԳ նախարարության Երիտասարդ դիվանագետների խորհուրդ և քաղաք Կրասնոյարսկում ՌԴ ԱԳ նախարարության ներկայացուցչություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը՝**

   Եվրասիական տնտեսական միության երկրների երիտասարդ պետծառայողների համաժողովին մասնակցություն

6. **Քննարկված թեմաները՝**

   Համաժողովի ընթացքում տեղի են ունեցել պանելային քննարկումներ, դասախոսություններ, գործնական հանդիպումներ Ռուսաստանի Դաշնության և ԵԱՏՄ մաս կազմող այլ երկրների պետական իշխանությունների, գիտական, փորձագիտական և ակադեմիական համայնքների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև մասնագիտական քննարկումներ և վարպետության դասեր «Նոր մեդիա», «Երիտասարդություն և հասարակություն» և «Թվային վերափոխում» թեմաներով:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

   Համաժողովը սկսվել է 2022 թվականի նոյեմբերի 25-ին պանելային քննարկմամբ, որի ընթացքում փորձագետները ներկայացրել են ԵԱՏՄ շրջանակում ինտեգրացիոն գործընթացների կարևորագույն նպատակները, առկա խնդիրները և լուծման

հնարավոր ճանապարհները: Հաշվի առնելով մասնագիտական և աշխատանքային ուղղվածությունը՝ ամենօրյա մասնակցություն եմ ունեցել «Նոր մեդիա» քննարկմանը: Այս ուղղվածության առաջին քննարկմանը վերլուծվել են ԵԱՏՄ երկրներում օրակարգային լուսաբանման արդյունավետությունը, փորձարկվել է ԵԱՏՄ երկրների պետական կառույցների լրատվական հարթակներում և հանրային լրատվամիջոցներում ինտերգարցիոն մեխանիզմների լուսաբանման արդյունավետությունը, ինչպես նաև մշակվել են ԵԱՏՄ երկրներում տարածաշրջանային ու դաշնային մակարդակներում երիտասարդական և հանրային տեղեկատվական հարթակների միջև դրական օրակարգի ձևավորման առաջարկները:

2022 թվականի նոյեմբերի 26-ին տեղի է ունեցել «Երիտասարդների ռազմավարություն. Եվրասիան միավորում է» թեմայով պանելային քննարկում: Քննարկվել է «Եվրասիական գաղափարի» հիմքը, ինչպե՞ս հաշվի առնել բոլոր երկրների ազգային ինքնությունը նոր գաղափարական ռազմավարություն մշակելիս, ներկայացվել է միջպետական համագործակցության նոր մոդելը՝ հաշվի առնելով օրակարգը և հանրային ծառայության թվային փոխակերպումը: «Նոր մեդիա»-ի երկրորդ քննարկմանը մասնակիցները ներկայացրել են իրենց երկրների առանցքային ոլորտներում առկա թվայնացման և այդ գործընթացների լուսաբանման խնդիրները, ձևավորվել է յուրաքանչյուր թիրախային լսարանի մանրամասն դիմանկարը, առաջարկվել են համապատասխան լուծումներ՝ կարճ ժամանակում կենսագործելու նպատակով:

2022 թվականի նոյեմբերի 27-ին տեղի է ունեցել քննարկում «Երիտասարդների տեսակետը ԵԱՏՄ-ի զարգացմանը» թեմայով, որի ընթացքում քննարկվել են սոցիալական և քաղաքական ինստիտուտների գլոբալ վերափոխման համատեքստում երիտասարդների առջև ծառացած մարտահրավերները, ինչպես նաև ինտեգրացիոն գործընթացների ադյունավետ կառուցման մեխանիզմները: «Նոր մեդիա» ուղղվածության մասնակիցները վարպետության դասի միջոցով սովորել են գրագետ և ճիշտ վարել պետական կառույցների ղեկավարների սոցիալական հարթակները՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի լսարանի առանձնահատկությունը:

Համաժողովի վերջին օրը մասնակիցները ներկայացրել են երեք օրվա ընթացքում մշակված նախագծեր, որոնք վերաբերել են ԵԱՏՄ երկրների երիտասարդ պետծառայողների կայուն արդյունավետ հաղորդակցության ստեղծմանը, ԵԱՏՄ անդամ երկրների կառավարությունների և քաղաքացիների միջև փոխգործակցության ինտեգրված հարթակի ստեղծմանը, ինչպես նաև ԵԱՏՄ երկրների քաղաքացիների համար անհատական թվային օգնականի մշակմանը, որը կնվազեցնի կյանքի որոշակի իրավիճակներում անհրաժեշտ տեղեկատվության քանակը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Երիտասարդ պետծառայողների և մասնագետների միջև ձևավորվել է մասնագիտական արդյունավետ երկխոսություն, որի արդյունքում ստեղծվել է փորձի փոխանակման հարթակ՝ հետագա համագործակցության և նախագծերի իրականացման համար: Համաժողովի ընթացքում ստացված գիտելիքները և գաղափարները գործնական կիրառություն կգտնեն հարկային և մաքսային ոլորտների տարբեր նախագծերի լուսաբանման գործընթացներում: Երիտասարդ պետծառայողների միջև ձեռք են բերվել պայմանավորվածություններ՝ կազմակերպել հաճախակի քննարկումներ ինտեգրացիոն թեմաների լուսաբանման մեխանիզմների և արդյունավետության բարձրացման շուրջ:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Չկան:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**

30.11.2022թ.